Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 10-ի
N 27 հրամանի

ԴԱՏԱԽԱԶԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Դատախազի կողմից իր պաշտոնեական և արտապաշտոնեական գործունեության ընթացքում, ի թիվս «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 11-ի ՀՀ օրենքով սահմանված վարքագծի կանոնների, ղեկավարվել նաև հետևյալ պահանջներով.

2. Որպես դատախազի վարքագծի կանոններից բխող ընդհանուր պահանջ՝ դատախազը պարտավոր է՝

1) ցանկացած պայմաններում ու իրավիճակում իր գործունեությամբ, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց, այդ թվում՝ հօգուտ որևէ անձի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական երաշխավորություն տալուց,

2) ցանկացած պայմաններում ու իրավիճակում խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի գործնական, մասնագիտական կամ բարոյական կապերից կամ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որոնք կարող են արատավորել դատախազի հեղինակությունը, բարի համբավը, պատիվը և արժանապատվությունը, այդ թվում՝ զերծ մնալ հանցավոր ենթամշակույթ կրող անձանց հետ սերտ հարաբերություններ հաստատելուց, հանցավոր գաղափարախոսությունը, մտածելակերպն ու կենսակերպը արդարացնելուց կամ գովաբանելուց,

3) ձեռնպահ մնալ դատավարությանը մասնակցող անձանց հետ այնպիսի հարաբերություններից, որոնք անաչառ օբյեկտիվ դիտորդի տեսանկյունից կարող են կասկածի տակ դնել դատախազի անկողմնակալությունն ու անաչառությունը,

4) բարձր պահել դատախազության հեղինակությունը, անձնական վարվեցողությամբ և գործունեությամբ հարգանք ու վստահություն ներշնչել դատախազության և իր անձի նկատմամբ, ցուցաբերել հարգանք մարդու և նրա իրավունքների ու ազատությունների հանդեպ, օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները կատարել ճշգրիտ ու ժամանակին, ունենալ պատասխանատվության զգացում,

5) դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, ձեռնպահ մնալ որևէ վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել, ինչպես նաև չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության կամ քաղաքական այլ կազմակերպության կամ շարժման նկատմամբ,

6) չանդամակցել այնպիսի մասնագիտական կամ հասարակական կազմակերպությունների, որոնց գործունեությունը կապված է էթնիկական,

ռասայական, ազգային, սեռական, դավանանքի, ֆիզիկական արատների կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված խտրականության հետ,

7) լինել ինքնուրույն և անաչառ, անկախ լինել օրենսդիր և գործադիր իշխանությունների ու այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների, լրատվության միջոցների, մասնավոր շահերի, հասարակական կարծիքի և այլ կողմնակի ազդեցություններից, ճնշումներից, սպառնալիքներից ու այլ միջամտությունից, ազատ լինել քննադատվելու մտավախությունից,

8) կաշկանդված չլինել իր խախտված իրավունքները սահմանված կարգով վերականգնելու և բողոքարկելու հարցում՝ վստահ լինելով, որ դա որևէ կերպ չի կարող մեկնաբանվել ի վնաս իրեն կամ խոչընդոտել իր մասնագիտական գործունեությանը,

9) զերծ մնալ դատախազական ակտերը և իր գործընկերների գործողությունները, մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, քննադատելուց, նրանց մասին արատավորող տեղեկություններ տարածելուց,

10) իր համար ընդունել այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն իր հավասարակշռվածության ու անաչառության հասարակական ընկալումը: Այս որակները կասկածի տակ դնող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում անհապաղ ցուցաբերել հետևողականություն դրանք շտկելու, վերացնելու ուղղությամբ,

11) լինել օրինապահ, արդարամիտ, համբերատար, կարգապահ, զուսպ, կշռադատված, բարեկիրթ, սկզբունքային, անկողմնակալ ու հաստատակամ, ուրիշի կարծիքը լսող, հարգող և այլակարծությունը հանդուրժող, այլ անձանց իրավունքների սահմանափակմանն ուղղված գործողություններ իրականացնելիս դրսևորել ծայրահեղ ողջամտություն և բարեկրթություն,

12) լինել անհանդուրժող գործընկերների կողմից վարքագծի կանոնների թույլ տրված խախտումների և ոչ բարոյական վարքագծի նկատմամբ,

13) համապատասխան մարմիններին անհապաղ տեղեկացնել մարդկանց կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրի անվտանգությանն սպառնացող վտանգի մասին, միջոցներ ձեռնարկել դրանք ժամանակին կանխարգելելու և հետևանքները վերացնելու նպատակով, պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, աջակցել դրանց իրականացմանը,

14) իրեն տրամադրված ծառայողական հրազենը կամ անձնական պաշտպանության հատուկ միջոցները հասարակական վայրերում ցուցադրաբար չկրել, հետևողականություն ցուցաբերել դրանց անվտանգության կանոնները պահպանելու հարցում, ծառայողական վկայականն օգտագործել բացառապես ծառայողական պարտականություններից բխող պաշտոնեական հարաբերություններում:

3. Պաշտոնեական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) գործել Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին, օրենքներին, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հրամաններին կամ հանձնարարականներին, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներին, ՀՀ դատախազության կանոնակարգին համապատասխան,

2) պահպանել աստիճանակարգված ենթակայության սկզբունքը, որը չի խոչընդոտում վերադաս կամ անմիջական վերադաս դատախազին զերծ մնալու ստորադաս դատախազի նկատմամբ այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր

արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի պատիվն ու արժանապատվությունը, վարկաբեկել նրա հեղինակությունը,

3) իր օրինական գործունեությանը խոչընդոտող ցանկացած հանգամանք հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել վերադաս դատախազին,

4) լինել անկախ և անաչառ, որոշումներ ընդունելիս չառաջնորդվել այս կամ այն երևույթի կամ անձի նկատմամբ ունեցած համակրանքով կամ հակակրանքով, իր գործելաոճով անկողմնակալ դիտորդի մոտ ձևավորել ազնիվ և օբյեկտիվ պաշտոնատար անձի համբավ,

5) դրսևորել անհրաժեշտ հետևողականություն օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները պահպանելիս, այդ թվում՝ ապահովել գույքի և եկամտի հայտարարագրի պատշաճ և ժամանակին ներկայացումը,

6) ունենալ ինքնուրույն համոզմունք և դատախազական ակտերը կայացնել ինքնուրույն, որը չի խոչընդոտում իրավական հարցերի շուրջ դատախազ գործընկերներից խորհուրդ ստանալուն, կարծիք հարցնելուն, քննարկում կազմակերպելուն,

7) բարեխղճորեն կատարել իր պաշտոնեական պարտականությունները, առաջնահերթության կարգով կատարել իր լիազորությունները՝ օրենքով դատախազին թույլատրված գործունեության այլ տեսակների նկատմամբ,

8) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու արհեստավարժությունը, միջոցներ ձեռնարկել ներպետական ու միջազգային իրավունքի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների հրամանների և հանձնարարականների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների վերաբերյալ իր մասնագիտական գիտելիքների պարբերական թարմացման, հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ, հետևել օրենսդրական փոփոխություններին, անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցություն ցույց տալ գործընկերներին,

9) հետևողականորեն և պատշաճ կերպով մասնակցել Արդարադատության Ակադեմիայում կազմակերպվող ուսումնական ծրագրերին՝ բացառելով անհարկի բացակայությունները և ուսումնական հանձնարարությունների չկատարումը,

10) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներով՝ միջոցներ ձեռնարկել օրինականությունն ամրապնդելու, իրավախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու և վերացնելու համար,

11) բացառել դատական նիստերից անհարգելի բացակայությունները, դատական նիստերին մասնակցել պատշաճ համազգեստով, կոկիկ և խնամված, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը, այդ թվում՝ զերծ մնալ դատավարության մասնակիցների նկատմամբ վիրավորական դիմաշարժությունից, ժեստիկուլյացիայից, հեգնանքից և այլն:

12) դատարանում մեղադրանքը պաշտպանելիս լինել համարձակ, աչալուրջ և ակտիվ՝ սեփական փաստարկները համոզիչ ներկայացնելու և մեղադրանքը կասկածի տակ դնող փաստարկները չեզոքացնելու նպատակով,

13) ապահովել դատախազական ակտերի, այդ թվում՝ բողոքների, մեղադրական ճառերի պատշաճ որակը և հիմնավորվածությունը,

14) համբերատար, արժանապատիվ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, գործընկերների և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատախազը շփվում է ի պաշտոնե, միաժամանակ փոխադարձ հարգանք պահանջել նաև դատավարության մյուս մասնակիցներից և դատարանից, նրանց կողմից անձնական կամ մասնագիտական բնույթի վիրավորանքների դեպքում դրսևորել զսպվածություն և զերծ մնալ հարաբերություններն անձնական հարթությունում պարզելուց և նմանատիպ իրավիճակներում խնդիրը լուծել բացառապես էթիկայի կանոնների խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություններ ներկայացնելու կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ներգործության այլ միջոցներ կիրառելու եղանակով,

15) իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, խտրականություն դրսևորելուց կամ նման տպավորություն ստեղծելուց, գործել այնպես, որ իր անաչառության և անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ,

16) քաղաքացիների ընդունելություն կազմակերպելիս լինել զուսպ և բարեկիրթ, չտրվել սադրանքների, ցուցաբերել պատրաստակամություն և ջանասիրություն՝ նրանց կողմից բարձրացված խնդիրներն ուսումնասիրելու, քննարկելու և դրանց լուծում տալու հարցում,

17) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն վարույթից կամ գործի քննությունից հեռացման (ինքնաբացարկի) անհրաժեշտություն առաջացնող դեպքերը: Հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին քրեական գործով դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշումներ կայացնելիս առաջնորդվել բացառապես գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտությամբ՝ բացառելով անձնական համակրանքի կամ հակակրանքի հիման վրա նման որոշումներ կայացնելը,

18) այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Հետևողական լինել իր տրամադրության տակ գտնվող քրեական գործերը, իրեղեն ապացույցները, հսկողական վարույթները, դիմումները կամ այլ գրությունները, ինչպես նաև պաշտոնական գրագրություն պարունակող էլեկտրոնային փոստը կողմնակի անձանցից անհասանելիություն ապահովելու, դրանց կորուստը, ոչնչացումը կամ վնասումը բացառելու հարցում,

19) միայն ծառայողական նպատակներով և հնարավորինս խնայողաբար օգտագործել իր գործունեության առնչությամբ տրամադրված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը,

20) պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների ու թերությունների բացահայտմանն ու անաչառ

քննադատությանը վերաբերվել ըմբռնումով և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու և հետագայում բացառելու համար,

21) գործընկերների հետ հարաբերություններում նպաստել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, նրանց նկատմամբ լինել հարգալից, հավասարակշռված, հարգել նրանց կարծիքը, պատրաստակամություն դրսևորել օգնելու և աջակցելու իր գործընկերներին, անիրավաչափորեն չմիջամտել գործընկերների պաշտոնեական այնպիսի լիազորությունների իրականացմանը, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ իր կարծիքը,

22) հետևել արտաքին տեսքին, աշխատավայրում լինել խնամված և կոկիկ, չկրել ծառայողական կոչմանն անվայել հագուստ,

23) վերադաս կամ անմիջական վերադաս դատախազը պարտավոր է մշտական հետևողականություն դրսևորել դատախազների գործունեության նկատմամբ, մշտապես հետևել նրանց աշխատանքի որակին, անուշադրության չմատնել դատախազների կողմից բարձրացված հարցերը և թույլ տրված սխալները, միջոցներ ձեռնարկել դրանք շտկելու, վերացնելու և հետագայում չկրկնելու ուղղությամբ, բոլորին արժանացնել միևնույն վերաբերմունքի, բացառել դատախազների միջև աշխատանքային ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխումը, ստորադաս դատախազների գործունեության վերաբերյալ կարծիք հայտնելիս կամ խրախուսանքի ներկայացնելիս լինել անկողմնակալ և օբյեկտիվ:

4. Արտապաշտոնեական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) չօգտագործել դատախազի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի,

2) թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնե իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա,

3) խուսափել իր կամ դատախազության հեղինակությունը վարկաբեկող, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, անաչառության վրա ազդող, որոշակի անձանցից նյութական և այլ կախվածության մեջ դնող կապերից, ձեռնպահ մնալ իրավախախտումներից, հասարակական համակեցության նորմերը ոտնահարող արարքներից,

4) զերծ մնալ գործի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հետ անհարկի շփումներից, այդ թվում՝ սոցիալական կայքերից օգտվելիս ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զերծ մնալ վիրավորական մեկնաբանություններից, զգացմունքներում լինել կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը:

5. Պատասխանատվությունը դատախազի վարքագծի կանոնների խախտման համար.

1) Դատախազի վարքագծի կանոնների և դրանից բխող պահանջների խախտում թույլ տալու դեպքում դատախազը կարգապահական պատասխանատվություն է կրում «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և սույն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան, որոնք հավասարապես և վերաբերելի մասով տարածվում են նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված,

ինչպես նաև դատախազության աշխատակազմում պետական ծառայություն իրականացնող անձանց նկատմամբ,

2) Դատախազի կողմից վարքագծի կանոնների և սույն հրամանով սահմանված պահանջների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա ատեստավորման, ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման, ինչպես նաև կարգապահական տույժեր նշանակելիս: